

ՆԱԽԱԳԱՀ ԱՌՈՒԹԻ ԵՒ ՎԱՐՉԱՊԵՏ ԱՏԻՊԻ ՀԱՆԳԻՊՈՒՄԻՆ՝ ՅԱԷԼԵԼԵԱԼ ԺԱՄԱՆԱԿ ՏՐԱՄԱԳՐԵԼ ԽՈՐՀՐԳԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ



Ըստ Նոր Նշանակուած վարչապետ Մուսֆաթ Ատիպի մօտիկ աղբիւրներու, վարչապետը յայտնած է, որ լիբանանեան քաղաքական ուժերու մէծ մասին հետ կայացած համաձայնութեան իրէն արդիւնք՝ իրեն յանձնարարուած է շատ արագ ժամանակամիջոցի մէջ կազմել մասնագետներէ, ոչ քաղաքական գործիչներէ բաղկացած կառավարութիւն եւ անմիջապէս սկսիլ բարեփոխումներու գործադրութեան: Ըստ վարչապետին, այս հիմամբ գործելու նպատակը ո՛չ մէկ կարծիքի առանձնաշնորհումն է, ոչ ալ լիբանանեան քաղաքական բաղադրիչներէն մէկուն թիրախաւորումը, այլ՝ մասնագետներէ բաղկացած կառավարութեան մը կազմութիւնը: Վարչապետը ընդգծեց, թէ որեւէ այլ առաջարկ, որ պիտի պարտադրէ այլ տիպի կառավարութիւն մը կազմել, չի համապատասխաներ այն առաքելութեան, որուն համար ինք նշանակուած է:

«Նկատի ունենալով, թէ ես զգուշ եմ, որ իմ առաքելութիւնս համահունչ ըլլայ մասնագետներէ բաղկացած կառավարութեան հիմնական համաձայնութեան սկզբունքին, ես Հանրապետութեան նախագահէն խնդրեցի այսօրուան հանդիպումը յետագծել յետմիջօրէի, որպէսզի յաւելեալ խորհրդակցութիւններ կատարեմ նախքան վերջնական դիրքորոշումը ճշդելը», ընդգծեց Ատիպ երէկ կէսօրին: Բայց եւ այնպէս արդիւնքը Նորանշանակ վարչապետին ակնկալածին պէս չեղաւ, ըստ երեւոյթի:

ԱՏԻՊ ԵՒ ԶՈՅՁ ՇԻՒ ՈՒՇԵՐԸ



Նոր Նշանակուած վարչապետ Մուսֆաթ Ատիպ երէկ հանդիպում ունեցաւ Ալի Հասսան Խալիլի եւ Հըզպալլայի քաղաքական ներկայացուցիչ Հուսէյն Խալիլի հետ՝ վերջնական քննարկում կատարելու ելեմուտքի նախարարութեան գծով:

Նախկին նախարար եւ Ներկայ Երեսփոխան Ալի Հասսան Խալիլ հանդիպումէն ետք յայտարարեց, որ

Շար.ը՝ 2

ԷՐՏՈՂԱՆ. «ՊԻՏԻ ՇԱՐՈՒՆԱԿԵՆԸ ԿԱՏԱՐԵԼ ԱՅՆ, ՉՈՐ ԼԱՒԱԳՈՅՆԸ ԿԸ ՆԿԱՏԵՆԸ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆԻ ՄԵՋ ԹՈՒՐԵԻՈՅ ՇԱՅԵՐՈՒՆ»

Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտողան Գերմանիոյ վարչապետ Անկլա Մերքելի հետ ունեցած տեսաժողովին ընթացքին յայտնեց. «Արեւելեան Միջերկրականի մէջ տարակարծութիւնները կարելի է լուծել բանակցութիւններու ճամբով՝ պայմանով որ արդարութեան վրայ հիմնուած կառուցողական մօտեցումով կատարուին անոնք»:

Թուրքիոյ նախագահական պալատը յայտնեց, թէ Էրտողան Նոյն ատեն շեշտած է, որ իր երկիրը «պիտի շարունակէ իր իրաւունքներու պաշտպանութեան համար վճռակամ եւ ազդու քաղաքականութիւն կիրարկել»:

Նշենք, որ Գերմանիան միջնորդութիւն կը կատարէ Յունաստանի եւ Թուրքիոյ միջեւ:

Միւս կողմէ, Էրտողան երէկ նաեւ յայտարարեց. «Թուրք ժողովուրդին զօրակցութեամբ Թուրքիան պիտի շարունակէ կատարել այն, զոր լաւագոյնը կը նկատու արեւելեան Միջերկրականի մէջ Թուրքիոյ շահերուն համար»:

«Պիտի շարունակենք աշխատիլ թուրք ժողովուրդը տարբեր ոլորտներու մէջ զարգացնելու՝ Նոյնիսկ եթէ Եւրոպայն ու Ամերիկան տնտեսապէս քայքայւին», աւելցուց ան:

«Թուրքիան վճռակամ է շարունակելու պայքարը

Շար.ը՝ 4

«ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՒ ՎԵՐԱԿԵՆՍԱՒՈՐՈՒՄԸ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԻՍԼԱՄ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ»

ԱՐԱՄԱ ԿԱԾՈՂԻԿՈՍ

Հինգշաբթի, 17 սեպտեմբեր 2020-ի առաւօտուն Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոս այցելեց Ազգային միացեալ վարժարան եւ հանդիպում ունեցաւ Լիբանանահայութեան վերականգնումի մարմինին անդամներուն հետ, ինչպէս նաեւ հետեւեցաւ մարմինի տարած աշխատանքին: Կաթողիկոսարանի CiliciaTV-ին ճամբով ան իր հայրական խօսքն ու թելադրութիւնը փոխանցեց մեր ժողովուրդի զաւակներուն: Ստորեւ կը ներկայացնենք վեհափառ հայրապետին պատգամը:



Ես կ'ուզեմ այս առիթով կարեւորութեամբ հիշգ կետեր շեշտել.-

դամները իրենց գործերը, ընտանիքը, հաճոյքը եւ հանգիստը ձգած՝ եկած են այստեղ օգտակար ըլլալու մեր հաւաքական ընտանիքին, որ Լիբանանի հայութիւնն է: Անցնող շաբաթներուն այս Մարմինը տիւ ու գիշեր աշխատեցաւ, ծրագրեց եւ ահաւասիկ հանգըր-



1) Կ'ուզեմ իմ բարձր գնահատանքս յայտնել Լիբանանահայութեան վերականգնումի մարմինին: Մարմինի ան-

ւանային կերպով իր աշխատանքին ու ծրագրումին արդիւնքը կեանքի կը

Շար.ը՝ 4

«ԱՐԱՔ-ԻՍՐԱՅԵԼԵԱՆ ՅԱԿԱՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ ՊԻՏԻ ԱՄՐՏԻ ԶԱՆԻ ՍԸ ԱՍԻՍԵՆ ԿԱՍ ՄԵԿ ՏԱՐԻԷՆ» Կ'ԸՍԵ ՖՐԻՏՍԸՆ

Իսրայելի մէջ Միացեալ Նահանգներու դեսպան Տէվիտ Ֆրիտմըն յայտնեց. «Միացեալ Նահանգներու կարծիքով, Ֆաթի շարժումէն հեռացած ղեկավար Մուհամետ Տահլանը Պաղեստինեան իշխանութեան նախագահ Մահմուտ Ապպասի հռահանական յաջորդն է: Այդ մասին կը մտածենք, սակայն չենք ուզեր պաղեստինեան ղեկավարութիւնը կազմել»:

Ֆրիտմըն շեշտեց. «Արաք-իսրայելեան հակամարտութիւնը իր աւարտին եզրին է, եւ կը նախատեսուի, որ աւարտի քանի մը ամիսէն կամ մէկ տարիէն»:

«Արաբական Միացեալ Էմիրութիւններու, Պահրէյնի եւ Իսրայելի միջեւ խաղաղութեան համաձայնագիրներ կնքելը սառնեցուած կացութեան թելում մըն է», ըսաւ ան եւ համոզում յայտնեց՝ «բազմաթիւ երկիրներ մօտ օրէն պիտի հետեւին Ապու Տապիի եւ Մանամայի օրինակին»:



Իսրայելի մէջ Միացեալ Նահանգներու դեսպանը Պաղեստինեան իշխանութիւնը ամբաստանեց «իր ժողովուրդը պատշաճ կերպով չօգտագործելու» յանցանքով՝ համոզում յայտնելով, որ «Յուդայի եւ Սամարիոյ» (Այսրը-յորդանանի իրեական անունը) բնակիչները «աւելի լաւ կեանքի կը ձգտին»:

Շար.ը՝ 4

«ԱՌԱՅ ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ԴԱՏԻ ԼՈՒԾՄԱՆ, ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼԵԻ ՄԵՋ ԿԱՅՈՒՆՈՒԹԻՒՆ Զ'ԸԼԼԱՐ» Կ'ԸՍԵ ՌՈՒՄԻԱ

Ռուսիոյ արտաքին գործոց նախարարութիւնը յայտնեց, թէ Պաղեստինեան դատին արդար եւ մնայուն լուծումը պէտք է կարեւոր տարր մը դառնայ Միջին Արեւելքի մէջ համապարփակ լուծման:

Ռուսիոյ արտաքին գործոց նախարարութիւնը երէկ, հաղորդագրութիւն մը հրապարակելով, ըսաւ, թէ Իսրայելի եւ շարք մը արաբական պետութիւններու միջեւ յարաբերութիւններու բնականոնացման լոյսին տակ «Պաղեստինեան խնդիրը կը շարունակէ մնալ սուր, եւ սիւալ պիտի ըլլայ կարծել, թէ առանց ատոր լուծման կարելի պիտի ըլլայ Միջին Արեւելքի տարա-

ծաշրջանին մէջ հաւաստի կայունութիւն հաստատել»:

Նախարարութիւնը այս առումով շրջանային ու միջազգային գործընկերներուն կոչ ուղղեց՝ «աշխուժացնելու այս կարեւոր ոլորտին մէջ իրենց համակարգուած ջանքերը»:

Հաղորդագրութիւնը կը նշէ, թէ Ռուսիան «պատրաստ է միացապէս այնպիսի աշխատանքի, ներառեալ՝ քառակողմանի յանձնախումբի ծիրին մէջ, որ ՄԱԿ-ի Ապահովութեան խորհուրդին կողմէ որդեգրուած մեքանիզմ մըն է՝ հետեւելու Միջին Արեւելքի մէջ տագնապի լուծման շուրջ բանակցութիւններուն»՝ սերտօրէն գործակցելով Արաբական լիկային հետ»:

ԻՍՐԱՅԵԼԻ ՀԵՏ ԻՐ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԲՆԱԿԱՆՈՒՄԱՑՈՂ ՅԱՅՈՐԴ ԵՐԿԻՐԸ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ ՕՍՄԱՆԸ

Իսրայելեան «Ետիթ Թիրոնթ» օրաթերթը՝ իսրայէլացի երկու ականաւոր պաշտօնատարներու յղում կատարելով, հաղորդեց, թէ Իսրայելի հետ իր յարաբերութիւնները բնականոնացնող յաջորդ երկիրը պիտի ըլլայ Օսմանը:

Օրաթերթը կը նշէ, թէ իսրայէլացի երկու ականաւոր պաշտօնատարները այդ մասին յայտարարած են Իսրայելի վարչապետ Պենիափին Նեթանիահուի՝ Ուաշինկթընի մէջ Արաբական Միացեալ Էմիրութիւններուն եւ Պահրէյնի հետ համաձայնագիրի ստորագրութենէն ետք:

Իսրայելեան օրաթերթը յայտնեց, թէ Օսմանը ներկայացուցիչ մը ուղարկած էր Սալիտակ տան մէջ ստորագրութեան արարողութեան, եւ երկու օր առաջ Իսրայելի արտաքին գործոց նախարար Կապի Աշքենազին խօսած է օմանցի իր պաշտօնակիցին հետ: «Ետիթ Թիրոնթ» նշեց, որ իսկական հաղորդակցութիւններ կան՝ մէկ կողմէ Իսրայելի եւ Միացեալ Նահանգներու, իսկ միւս կողմէ Մարոքի հետ՝ Իսրայելի հետ յարաբերութիւնները բնականոնացնող երկիրներուն միանալու համար:

ԱՐՅԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԱՅՑԵԼԵՑ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՏԱՐԲԵՐ ՀԱՏՈՒԱԾՆԵՐ



Արցախի Հանրապետութեան նախագահ Արայիկ Յարութիւնեան, Արցախի պաշտպանութեան նախարար Ջալալ Յարութիւնեանի ընկերակցութեամբ, 16 սեպտեմբերին այցելեց սահմանային տարբեր հատուածներ եւ ծանօթացաւ գետնի վրայ տիրող իրավիճակին: Լուրը հաղորդեց Արցախի Հանրապետութեան նախագահի աշխատակազմի տեղեկատուութեան գլխաւոր վարչութիւնը:

Նախագահ Յարութիւնեան նշեց, որ հանրապետութեան արտաքին անվտանգութեան խնդիրները միշտ ալ կը գրաւեն կառավարութեան ուշադրութիւնը, իսկ անոնց լուծման ուղղութեամբ ջանքեր պիտի չխնայուին: Նախագահը նշեց նաեւ, որ հակառակորդի որեւէ արկածախնդրութիւն պիտի արժանանայ հայկական կողմի ծանր ու կործանիչ հակահարուածին:

ԹՈՒՐԵԻԱ ԿՈՉ Կ'ՈՒՂԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ՝ «ԱՆՄԻՋԱՊԵՍ ՀԵՌԱՆԱԼՈՒ ԱԶՐՊԵՅՃԱՆԻ ԲՈՆԱԳՐԱԵԱԼ ՀՈՐԵՐԵՆ»

Թուրքիա կոչ ուղղած է Հայաստանին՝ յարգելու ՄԱԿ-ի Ապահովութեան խորհուրդի ու ԵԱՀԿ-ի որոշումները եւ անմիջապէս հեռանալու «իր բռնագրաւած ագրպէճանական հողերէն»: Թրքական պետական «Անատոլու» լրատու գործակալութեան արաբերէն ծառայութիւնը կը հաղորդէ, որ այս մասին չորեքշաբթի օր «Աշխարհաքաղաքական շրջանային բեւեռացումն ու թուրք-ագրպէճանական յարաբերութիւնները» խորագիրով առցանց դասախօսութեան մը ընթացքին յայտնած է Թուրքիոյ արտաքին գործոց փոխնախարար Եաւուզ Մալիմ Զըրան:

«Հայաստանի նախադարձակ քաղաքականութիւնները մեծագոյն արգելք կը նկատուին տարածաշրջանին մէջ կայունութեան», նշած է Զըրան:

«Թուրքիան աջակցութիւն կը տրամադրէ՝ Հայաստանի կողմէ ագրպէճանական Հարաբաշ շրջանի բռնագրաւումի հարցը խաղաղ ճամբով, միջազգային օրէնքի եւ Ագրպէճանի հողային ամբողջականութեան հիմամբ լուծելու համար», յայտնած է Թուրքիոյ արտաքին գործոց փոխնախարարը՝ աւելցնելով. «Հայաստանը պէտք է յարգէ ՄԱԿ-ի Ապահովութեան խորհուրդի ու ԵԱՀԿ-ի որոշումները եւ անմիջապէս հեռանայ ագրպէճանական բռնագրաւեալ հողերէն»:

ԱՆՎԱՐ ՌԻՍՄԱՆ ԿԱՐԵԼԻՈՒԹԻՒՆ ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՄԱՐԱՆՆԵՐՈՒՆ ՄԵՋ



Այս տարի իւրայատուկ պայմաններու մէջ կը դիմաւորենք կրթական տարեմուտը, հետեւաբար, քաջածանօթ ըլլալով մեր ծնողներուն դիմագրաւած տեսակաւոր հարցերուն ու դժուարութիւններուն, Ազգային վարչութիւնը վճռեց 2020-2021 կրթական տարեշրջանին լիբանանահայ ազգային վարժարաններուն մէջ անվճար ուսման կարելիութիւն տեսնելու բոլոր աշակերտներուն համար:

Ուստի, այս առթիւ նախ կոչ կ'ուղղենք հայ ծնողքին՝ թելադրելով, որ անպայմանօրէն իրենց զաւակներուն քայլերը ուղղեն դէպի ազգային վարժարան, որպէսզի հայ դպրոցի հարազատ միջավայրին մէջ, անոնց կեանքը կերտուի ազգային շունչով ու արժէքներով:

Կոչ կ'ուղղենք նաեւ հայ դպրոցի բարերարներուն ու բարեկամներուն՝ յիշեցնելով, որ հայ դպրոցը կարիքը ունի միահամուռ զօրակցութեան ու լայն աջակցութիւններու:

Ներկայ փուլին հայ ծնողն ալ պարտաւոր է վերագնահատել հայ դպրոցին հանդէպ իր ունեցած ըմբռնումն ու վերաբերմունքը եւ զգալու, թէ միայն հաւաքական մասնակցութեամբ կարելի է պահել եւ պահպանել մեր ազգային տոկունութեան խարիսխը եղող հայ դպրոցը:

ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՅՆՈՐԱՐԱՆ

ՌԱՌՈՒԼ ՆԱՀՄԷ. ՀԱՅԻՆ ՏՈՊՐԱԿԸ 62 ՕՐՈՒՄՆ ՀԱՄԱՐ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ 1000 ԿՐԱՄ՝ 900-Ի ՓՈԽԱՐԷՆ»

Տևտեսության եւ առեւտուրի նախարարի պաշտօնակատար Ռաուլ Նահմէ երեկ միջազգային սննդեղենի ծրագիրին հետ տուած մամլոյ ասուլիսի ընթացքին շնորհակալութիւն յայտնեց այդ ծրագիրին՝ Լիբանանին 12.000 թոն ալիւր նուիրելուն համար:

Նախարարի պաշտօնակատարը յայտարարեց, որ ասոր իբրեւ արդիւնք հացին տոպրակը 62 օրուան համար 900 կրամէն պիտի բարձրանայ 1 քիլոյի՝ 21 սեպտեմբերէն սկսեալ:

Ինչպէս նաեւ խօսեցաւ ալիւրը փոռներուն բաժնելու մեքանիզմի կարգաւորման մասին:

«Մենք փոռներուն հետ համաձայնեցանք, որ հացի տոպրակին գինը պիտի մնայ 2000 լիբանանէան ոսկի, եւ կշիռը պիտի ըլլայ 1000 կրամ՝ 900-ի փոխարէն, որովհետեւ ալիւրը նուրէ է, եւ ձրիաբար պիտի բաժնուի այն փոռներուն, որոնք արձանագրուած են Տևտեսության եւ առեւտուրի նախարարութեան մօտ, եւ պիտի ստուգուի, որ անոնք կ'աշխատին եւ կ'արտադրեն արաբական հաց», շեշտեց Նահմէ:

Նախարարը նշեց, որ Լիբանան այժմ կարիք չունի ալիւրի, այլ հացահատիկները եւ ցորենը պարպելու ժամանակակից սարքերու, որոնք արդիական միջոցներով կը պահպանեն այդ հացահատիկներու ապահովութիւնը եւ մաքրութիւնը: Ան նշեց, որ «անդեղէնի սակաւի աջակցութիւնը» տակաւին կը շարունակուի:

ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՋ «ՔՈՐՈՆԱ» ԺԱՅՐՈՎ ՎԱՐԱԿՈՒՄԵՆԵՐՈՒՆ ԹԻԺ ԶԱՍԱԲ 26.768-Ի, ՄԱՅՈՒՆ ԴԱՐԱԳԱՆԵՐՈՒՆԸ՝ 263-Ի, ԻՍԿ ԱՊԱԶԻՆԱՄԵՆԵՐՈՒՆԸ՝ 10.217-Ի

Առողջապահութեան նախարարութեան տեղեկութիւններուն համաձայն, երեկ Լիբանանի մէջ «Քորոնա» ժահրով վարակուածներուն թիւը հասաւ 26.768-ի՝ վերջին 24 ժամուան ընթացքին արձանագրելով 685 նոր վարակուածներ, որոնցմէ 669-ը՝ տեղացիներ, իսկ 16-ը՝ Լիբանան վերադարձած քաղաքայիններ: Մահացած են 4 նոր պարագաներ:

Նախարարութիւնը յայտնեց, որ ցարդ «Քորոնա» ժահրով վարակուած 263 պարագաներ մահացած են, իսկ 10.217 ուրիշներ՝ ապաքինած:

Սրահները, խաղավայրերը, հանրային պարտէզները բանալու նոր որոշում
Ներքին գործոց եւ քաղաքապետութեանց հարցերու նախարարի պաշտօնակատար Մուհամատ Ֆահմի հրապարակեց նոր որոշում մը, որ կը վերաբերի արդիւնաբերական եւ առեւտրական հաստատութիւններու բացման եւ փակման ժամանակացոյցի փոփոխութեան:

Որոշուեցաւ վերաբանալ շարժապատկերի սրահները, թատերարահները, խաղավայրերը, հանրային պարտէզները, երեխաներու յատուկ խաղի փակ սրահները՝ պայմանով որ պահպանուի միայն 50 տոկոս յաճախորդ ընդունելու դրութիւնը եւ յարգուին «Քորոնա» ժահրը կանխարգիլելու բոլոր միջոցառումները:

Տակաւին կը կիրարկուի կէս գիշերուան ժամը 1:00-էն մինչեւ առաւօտեան ժամը 6:00 փողոց դուրս գալու արգելքը:

ԶԱՏՆՈՅ ԶԵՐՈՍԱՄԱՐՏԻ 100-ԱՄԵԱԿԻ ԱՄԱՆԱԿԱՆ ՄԱՏԱՂԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Հաճնոյ հերոսամարտի նահատակներուն նուիրուած աւանդական մատաղի պատրաստութիւնը տեղի պիտի ունենայ շաբաթ, 3 հոկտեմբեր 2020-ին:

100-ԱՄԵԱԿԻ ՅՈՒՇԱԿՈԹՈՂԻ ԲԱՅՈՒՄ

Տեղի պիտի ունենայ կիրակի, 4 հոկտեմբեր 2020-ին, յաւարտ Ս. պատարագի եւ մատաղօրինեցի:

- Նկատի առնելով երկրի ներկայ կացութիւնը՝ խորհրդանշական մատաղի պատրաստութիւնը տեղի պիտի ունենայ շատ սահմանափակ ներկայութեամբ:

Այս տարի շրջուն հանգանակութիւն տեղի պիտի չունենայ, հետեւաբար, այն հայրենակիցները, որոնք կը փափաքին մատաղցու ոչխար կամ նուիրատուութիւն կատարել, կրնան փոխանցել Հաճնոյ հայրենակցական միութեան գրասենեակ, նաեւ՝ Ս. Գեորգ եկեղեցւոյ խորհուրդատունը:

ԶԱՏՆՈՅ ԶԱՅՐԵՆԱԿԱԳԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՆՈՐ ՊԱՏԺԱՄԻՋՈՅՆԵՐ՝ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՋ ԳՏՆՈՒՈՂ ԵՐԿՈՒ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԴԷՄ

Միացեալ Նահանգներու ելեւմուտքի նախարար Սթիվըն Մուշի յայտարարեց, որ OFAC-ը՝ Նախարարութեան պատկանող արտասահմանեան կալւածներու վերահսկողութեան գրասենեակը, պատժամիջոցներ սահմանած է Լիբանանի մէջ հիմնուած Arch Consulting եւ Meamar Construction ընկերութիւններու նկատմամբ՝ տրուած ըլլալով, որ անոնք կը պատկանին Զեզալլայի կամ անոր վերահսկողութեան ենթակայ են: Սառեցուած են նաեւ սեփականութիւնները եւ շահերը գործադիր խորհուրդի փոխնախագահ Սուլթան Խալիֆա Ասատի, որ սերտ կապեր ունի երկու ընկերութիւններուն հետ: Մուշ աւելցուց, որ՝ շահագործելով Լիբանանի տնտեսութիւնը եւ խաբելով Լիբանանի փտած պատասխանատուները, Զեզալլայի հետ կապ ունեցող ընկերութիւնները պետական պայմանագիրներ կը ստանան:

Մուշէ ընդգծեց, որ Միացեալ Նահանգներ յանձնառու են թիրախաւորելու Զեզալլան եւ անոր հետեւորդները, քանի որ անոնք փտած ձեւով կը շահագործեն լիբանանեան աղբիւրները, որպէսզի իրենց ղեկավարները հարստացնեն, մինչ լիբանանցի ժողովուրդը կը տառապի ոչ բաւարար ծառայութիւններ: Մուշէ յայտնեց, որ Զեզալլայի Կործնութիւնը վնաս կը հասցնէ Լիբանանի տնտեսութեան տարբեր կողմերուն, ներառեալ՝ շինարարութեան եւ ենթակառոցի մարզերուն, եւ կ'օգտուի Arch եւ Meamar ընկերութիւններէն, որպէսզի դրամական փոխանցումները Զեզալլայի սեփական հաշիւներուն կատարէ, ինչ որ, ըստ անոր, կը հարստացնէ Զեզալլայի ղեկավարները եւ լիբանանցի ժողովուրդը կը զրկէ իր դրամներէն:

Նախարար Մուշէ նշեց, որ Զեզալլա դաւադրութիւն կը կազմակերպէ լիբանանցի պատասխանատուներուն հետ, ներառեալ՝ հանրօգուտ շինութեանց եւ փոխադրութեան նախկին նախարար Էուսեֆ Ֆինետաուսի, միլիոնաւոր տուլարներու պետական պայմանագիրներ ուղղելով այդ ընկերութիւններուն, որոնք կը վերահսկուին Զեզալլայի գործադիր խորհուրդին կողմէ:

Մուշէ բացատրեց, որ Arch-ը եւ Meamar-ը շարքին են այն բազմաթիւ ընկերութիւններուն, որոնք Զեզալլա-



յի գործադիր խորհուրդին կը պատկանին՝ նշելով, որ Զեզալլա կ'օգտագործէ այս ընկերութիւնները իր դրամական փոխանցումները ծածկելու եւ փախուստ տալու ամերիկեան պատժամիջոցներէն: «Զեզալլա 2019-էն ի վեր գործակցած է Ֆինետաուսի հետ, որպէսզի Arch եւ Meamar ընկերութիւնները յաջողին միլիառաւոր տոլար արժող լիբանանեան պետական պայմանագիրներ ստանալ: Այս ընկերութիւնները, իրենց կարգին, այս պայմանագիրներէն ստացած իրենց շահերը ուղարկեցին Զեզալլայի գործադիր խորհուրդին: Սուլթան Խալիֆէ Ասատ արձանագրուեցաւ իբրեւ Meamar ընկերութեան հիմնադիրը, եւ շարք մը անհատներ, որոնք արձանագրուած են այդ ընկերութեան փաստաթուղթերուն վրայ, նաեւ կապեր ունին Զեզալլայի հետ», նշեց Մուշէ:

ՓՈՍՓՈՆՅԱՆ ԱՐԶԱԳԱՆԳԸ

Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Մայք Փոմփեյտ արձագանգեց ամերիկեան ելեւմուտքի նախարարութեան կողմէ Arch Consulting եւ Meamar Construction ընկերութիւններուն նկատմամբ սահմանուած պատժամիջոցներուն:

Ան կատարեց թօնիւրդեան հետեւեալ գրառումը. «Զեզալլա կ'որոշեցէր փտած ինքնահարստութիւնը, որպէսզի իր օրակարգերը յառաջ մղէ Լիբանանի մէջ: Մենք այսօր ապօրինի դասակարգեցինք Զեզալլայի հետ կապ ունեցող երկու ընկերութիւններ եւ ծրագիրներ ունեցող պատասխանատու մը: Լիբանանի ժողովուրդը լաւագոյնին արժանի է եւ Միացեալ Նահանգներ պիտի շարունակեն կանգնիլ փտածութեան դէմ»:

ՆԱԽԱԳԱՀ ԱՌԻՆ ՎԱՐՉԱՊԵՏ...

Շարունակուած Ա. Էջէն

ԱՏԻՊ-ԱՌՈՒՆ ԶԱՆԴԴՊԵՏ

Կերոնշեալ հանդիպումէն ետք վարչապետ Ատիպ ուղղուեցաւ Նախագահական պալատ, ուր տեսակցութիւն ունեցաւ Նախագահ Աւուրի հետ եւ անոր փոխանցած իր կատարած հանդիպումին արդիւնքը: Քննարկում տեղի ունեցաւ խոչընդոտները լուծելու ուղիներուն վերաբերեալ: Վարչապետ Ատիպ իրեն հետ չէր բերած կառավարութեան նոր կազմի անունները:

Նախագահ Աւուր վարչապետէն խնդրեց շարունակել ընթացող խորհրդակցութիւնները եւ յարթահարել խոչընդոտները՝ տրուած ըլլալով, որ երկրին ներկայ կացութիւնը կը պահանջէ փրկարարական արագ աշխատանքի անցիլ, մասնաւոր 16 օր անցած է վարչապետի նշանակումէն, եւ երկիրը կը սպասէ փոխմըմունքի՝ նոր կառավարութիւն կազմելու համար: Խորհրդակցութիւններու աւարտի ժամկէտ չճշդուեցաւ:

Նախագահ Աւուր հաստատեց իր յանձնառութիւնը՝ Ֆրանսական Նախաձեռնութեան եւ անոր բոլոր բաղադրիչներուն, որոնք ընդունուած էին Լիբանանի քաղաքական ուժերուն կողմէ:

Հանդիպումէն ետք նոր նշանակած վարչապետը յայտարարեց, որ Նախագահ Աւուրին հետ համաձայնած են յաւելեալ ժամանակ տրամադրել խորհրդակցութիւններուն:

Հարկ է նշել, որ կարգ մը աղբիւրներ «Էլ.Պի.Սի.» պատկերասփիւռի կայանին փոխանցեցին, որ կառավարութեան կազմութեան յորթածրարի քննարկումը այժմ կը կործնականաբար ելեւմուտքի նախարարութիւնը զոյգ շիւ ուժերուն մօտ պահելու շուրջ՝ այն պայմանով, որ ընտրուի նախարար մը, որ մասնագէտ է եւ ընդունուած՝ բոլոր քաղաքական ուժերուն կողմէ:

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԼՈՒՐԵՐ

41 թոն օժանդակութիւն պարունակող յունական նաւը կը հասնի Պէյրութի Նաւահանգիստ



Բանակի հրամանատարութիւնը յայտարարեց, որ երեկ Պէյրութի Նաւահանգիստ հասած է յունական նաւ մը, որ կը պարունակէ 41 թոն բժշկական, սննդեղէնի եւ շինարարութեան նիւթերու օժանդակութիւն, որ գոյացած է Յունաստանի մէջ լիբանանեան դեսպանատան ջանքերով՝ համագործակցութեամբ յունական-ամերիկեան մշակութային կազմակերպութեան: Կարգ մը անձնական ընկերութիւններ եւս 127 թոն օժանդակութիւն ուղարկած են:

Ֆրանսայի զինուորական ստորաբաժանումը աւարտեց Պէյրութի Նաւահանգիստի փլատակներու վերացման իր առաքելութիւնը



Բանակի հրամանատար գոր. Ժոզեֆ Աւուր երեկ Եարզէի մէջ ընդունեց Ֆրանսացի զինուորական կցորդ, գնդապետ Ֆապրիս Շափելը, որ կը գլխաւորէր զինուորական պատուիրակութիւն մը:

Գնդապետ Շափել մանրամասն տեղեկութիւններ փոխանցեց չորեքշաբթի օր իր լրումին հասած Պէյրութի Նաւահանգիստին մէջ իրականացուած փլատակներու վերացման առաքելութեան գծով, որ կատարուեցաւ Ֆրանսական զինուորական ստորաբաժանումին կողմէ՝ գործակցութեամբ լիբանանեան բանակին:

Ֆրանսական ստորաբաժանումը Ֆրանսա պիտի վերադառնայ յաջորդ շաբթուան սկիզբը:

Պէյրութի հրշէջներու բողոքի ցոյց



Պէյրութի հրշէջներու բաժանմունքի անդամները բողոքի ցոյց մը կատարեցին քաղաքապետարանին առջեւ եւ պահանջեցին իրենց նիւթական ու բարոյական իրաւունքները՝ նշելով, որ բազմաթիւ անդամներ, որոնք հանգստեան կոչուած են, թշուառ կեանք կ'ապրին:



Անոնք կոչ ուղղեցին, որ հրշէջները ստանան բանակին եւ ներքին ապահովութեան ուժերու անդամներուն նոյն իրաւունքները՝ պահանջելով նիւթական հատուցումներու տրամադրման գործընթացի արագացումը՝ Նաւահանգիստի պայթումին զոհ զացած հրշէջներու ընտանիքներուն:

Ցոյցին ընթացքին տեղի ունեցաւ բախում հրշէջներուն եւ Պէյրութի քաղաքապետին թիկնապահներուն միջեւ: Հրշէջները շեշտեցին հետեւեալը. «Կշտացանք խոստումներէն, մենք ամէն օր վտանգի տակ ենք, մենք մեր իրաւունքներէն մաս մը կ'ուզենք: Եթէ մեռնիք, մեր զաւակները անօթի կը մեռնին»:

ԶԱՄԱՐԵԱՆԱԿԱՆ

ԶԱՄԱՐԵԱՆԱԿԱՆ

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Զանի մը ամիսէ ի վեր մտահոգ ենք Հայաստանի իրադարձութիւններով՝ հայ-ազերիական սահմանին վրայ անկայուն վիճակ, քաղաքական անլուծելի խնդիրներ եւ այլն... Այս հարցերը սկիզբ առին յուլիս 10-ին, Թուրքիոյ նախագահին ստորագրութեամբ Այա Սոֆիայի պատմական եկեղեցին ու թանգարանը մզկիթի վերածելու վերաբերող որոշումով: Այս արտօսագիրը ճակատագրական էր՝ տրուած ըլլալով, որ այդ եկեղեցին պատմութեան մէջ մշակութային մեծ դեր խաղացած է, ինչպէս նաեւ կարեւոր դեր ուներ իսլամական երկրի՝ Թուրքիոյ մէջ: Այս մէկը եղաւ բարձր շուշով, այս մասին խօսուեցաւ գրեթէ բոլոր պատկերասփիւռի կայաններէն եւ ընկերային ցանցերէն: Ապա, երկու օր ետք, հայ-ազերիական սահմանի վրայ շարժում սկսաւ՝ Ներթափանցման հետախուզական փորձ, սակայն ազերի բանակը չաջողեցաւ ոտք դնել հայկական հողերու վրայ, այլ կրեց ծանր վնասներ: Այդ բաւարար չէր կ'երեւի, որովհետեւ ազերի բանակը յաջորդող օրերուն շարունակեց իր յարձակումը հայկական դիրքերու վրայ: Հայկական կողմը ես ունեցաւ մարդկային գոհեր, վնասուեցան տուներ, դպրոցներ, մանկամտօրներ, նաեւ՝ «Զորնա» ժաիրի տարածման այս դժուար պայմաններուն մէջ՝ դիմակ արտադրող կերողներ: Արձանագրուեցան հայկական կողմի առաջին գոհերը՝ Սմբատ, Սօս, Կրիշա եւ Կարուշ: Այսպիսով ոտքի ելան սփիւռքի հայ երիտասարդները, կազմակերպուեցան ցոյցեր տարբեր երկիրներու Ազրայժեանի հիւպատոսարաններու դիմաց: Ցոյցերը սկսան Փարիզէն, ապա շարունակուեցան ու հասան Աթենք, Շուէտ, Պոսթըն, Լոս Անճելըս, Ամսթըրփ, Պրագի, եւ այլ շրջաններ: Բարձրացաւ պատառներուն վրայ գրուած էին «Ո՛ր պատերազմին, ո՛չ Ալիեիին» եւ այս տեսակի տարբեր կարգախօսներ: Սաւկայն ասոնց դիմաց ազերիները իրենց երկրին մէջ այլ նպատակ ունեցող ցոյցեր կազմակերպեցին՝ ոչ միայն քաջալերելով պատերազմը, այլ նաեւ պահանջելով շարունակել այդ պատերազմը մինչեւ Շուշի ու Երեւան: Տարօրինակ է չէ՝ այս տարբերութիւնը: Մահմանակից երկիրներ, սակայն բոլորովին տարբեր քաղաքակրթութիւններ ու տարբեր մտայնութիւններ: Իսկ գալով այլ երկիրներու մէջ տեղի ունեցած ազերիական ցոյցերուն, անոնք միշտ կը փորձէին հայերուն կազմակերպածը վերածել վայրագութեան, վճիռ, կռիւի նոյնիսկ պատճառելով վիրատուներ, որոնք իիւանդանոց հասնելու կարիք ունեցան: Գերմանիոյ մէջ Հայաստանի Հանրապետութեան հիւպատոսարանի պաշտօնական ինքնաշարժը «պատահաբար» կրակ կ'առնէ, իսկ Սան Ֆրանսիսքոյի մէջ հայկական դպրոցի մը պատերը կը խժթուին: Իսկ ասոնց դիմաց ի՞նչ: Համաշխարհային ճանաչում, թե՛ համաշխարհային դատապարտում...



Մէկրի դնելով համաշխարհային հարցը՝ զամ սիրտս անելի ծանրացուցած հարցի մը: Ի՞նչ էր լիբանանահայութեան ներդրումը ազերիական պետութեան դեմ դատապարտման աշխատանքին մէջ: Վստահաբար վերջերս շատ լսեցիք Լիբանանի տնտեսական եւ ընկերային հարցերուն մասին: Վստահ եմ, որքան ծանծաղացք այս նիւթերէն, սակայն իմ ըսելիքս այս գծով չէ: Կը կարծեք, թէ Լիբանանի ներկայի բոլոր հարցերուն լոյսին տակ, կարելի՞ էր ցոյցեր կազմակերպել: Կարելի՞ էր իռկուներէն սկսած «յեղափոխութեան» իրարանցումի պայմաններուն մէջ, լիբանանահայութիւնը բողոքի ցոյց կազմակերպէր այլ երկրի մէջ տեղի ունեցող պատերազմի մը պատճառով: Կարելի՞ էր «Զորնա» ժաիրի տարածման գազաթնակէտին, լիբանանահայութիւնը հաւաքել տր ազերիական հիւպատոսարանի դիմաց: Կը կարծե՞ք Լիբանանի մէջ տեղի ունեցած վերջին իրադարձութիւններէն ետք Թուրքիոյ հակամետ



կողմը ոտքի պիտի չելլէր եւ ալ անելի մեծ հարցերու դուռ պիտի չբանար՝ սպառնալով ողջ Լիբանանի հայ ժողովուրդին: Այս բոլորը եթէ տեղի ունենային, մենք պիտի վնասէինք մենք մեզ, մանաւանդ՝ մեր ապահովութիւնը: Պիտի լսեինք տվորականէն անելի քննադատութիւններ: Պիտի լսեինք նաեւ խօսքեր, որոնք հարցականի տակ կ'առնէին մեր քաղաքացիութիւնը: Այս բոլորը հասկնալով եւ ըմբռնելով հարցին լոյսութիւնը, լիբանանահայ երիտասարդութիւնը նախընտրեց ցոյցեր չկազմակերպել հիւպատոսարանի դիմաց, այլ բողոքը կատարել ընկերային ցանցերուն վրայ: Սակայն կը կարծե՞ք բաւարար է: Շատեր պիտի ըսեն, որ այս օրերուն ամենէն նպատակայարմար բողոքները տեղի կ'ունենան առցանց, սակայն անձնապէս այդ բաւարար չեմ նկատեր: Անիկա բաւարար կ'ըլլայ, երբ բողոքի ցոյցն ու առցանցը կ'ամբողջացնեն զիրար եւ հանրային կարծիքին կը ներկայացնեն ամբողջ հարցը: Լիբանանահայութիւնը միշտ եղած է առաջին գիծի վրայ եւ առաջին նախաձեռնողը: Իսկ իմմա՞...

Միտքս ամփոփած եւ այս յօդուածիս տողերը աւարտած էի, եւ յանկարծ պայթումի ձայն մը: Պայթում մը, որ ուժգնօրէն ցնցեց Լիբանանի սիրտը, շարժեց բոլորին տան իմերը, հոգեպէս անելի վիրաւորեց Լիբանանի ժողովուրդը: Ժողովուրդ մը, որ ալ իր կեանքի վերջին շունչը կը քաշէր եւ կը փորձէր այս դժուարին պայմաններու մէջ վերապրի...

Անելին, լիբանանահայութիւնը խորապէս վնասեց իր զաւակները, անձնական հաստատութիւնները, ակումբներն ու կեդրոնները: Մեր հայրերն ու մայրերը բոլորն ալ ապրած են երկարատեւ պատերազմ Լիբանանի մէջ, բայց անոնք կը վկայեն, թէ այսպիսի ուժգին պայթում մը չեն տեսած: «Այն, ինչ որ մենք տարիներու պատերազմին տեսանք, դո՛ւք երիտասարդներդ վկայեցիք այս մէկ պայթումով», կ'ըսէ վկայ մը: Պայթումին մօտիկ վայրերէն քալած ժամանակ կը գտնես բոլորովին քանդուած շրջաններ, կոտրած մանր-մունր ապակիներ, պատռտուած հագուստներ, նետուած դիմակներ, արիւնոտ ձեռքի հետքեր, ապագայի փճացած երագներ... Որ մէկ տեսարանը նկարագրել: Ո՛ր կացութիւնը բացատրել: Կարծես լիբանանցիին միտքը բաւական չափով խճողուած չէր... Տարեցներու երեսը դիտես՝ իոն կը տեսնես տարիներու դժգոհութիւն եւ անապահովութիւն: Իսկ երիտասարդներուն երե՛սը... անվերջ յուսահատութիւն:

Բայց եւ այնպէս, Լիբանանի նաւահանգիստի մեծ պայթումին յաջորդ օրերը վկայեցինք տարբեր տեսարան մը երիտասարդութեան մօտ: Ան հակառակ աղէտին, տարօրինակ աշխուժութեամբ, հաստատ քայլերով ճամբայ իջած է՝ ձեռքին անէ մը: Ան ամբողջ օրը զբաղուէր պայթումէն վնասուած շրջաններու մաքրութեամբ, խոյնիկ եթէ այդ ըլլար փողոցը, անծանօթի տունը, թէ պատահական խանութներ... Լիբանանահայութիւնը իբրեւ հաւաքականութիւն, Լիբանանի գլխաւոր համայնքներէն մէկը, ոտքի կանգնած էր, ըլլալ անձնական միջոցով, թէ միութիւններու ճամբով կ'աշխատէին ձեռք-ձեռքի՝ վերստին Լիբանանը եւ հայութիւնը բարձրացնելու նպատակով: Առաջին անգամ չէ, որ հայ ժողովուրդը ոչինչէն շինած է տնոք եւ անելի լաւը, սակայն ալ ժամը հասած է, որ ընդունինք, թէ այս բոլոր վերոյիշեալ հարցերը խորապէս կը սպառնան լիբանանահայութեան գոյատեւման եւ գոյութեան: Մեզի կը մնայ համբերել եւ սպասել...

... Հակառակ վերը յիշուած մտահոգութեանս, լիբանանահայ երիտասարդութիւնը դարձեալ փաստեց, որ գաղութի ծառայութեան մէջ տակաւին կը մնայ պստեշի վրայ:

ՆԱՐՈՏ ԶԵՉԵՊԱՇԵԱՆ

ԱՆՈՐՔ ՄԵՐ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿԱՐԵՒՈՐ ՄԱՍՆԻԿՆ ԵՆ՝ ՏԷՐ ԸԼԼԱՆՔ

Շատ յաճախ մեր շրջանակին մէջ կը լսեմք, թէ այս կամ այն մանուկը ծնած է սահմանափակ կարողութիւններով, ինչպէս նաեւ կը լսեմք այլ փոքրիկներու մասին, որոնք իրենց դպրոցական կենսքին մէջ որոշ նիւթերու մէջ տկարութիւններ կը ցուցաբերեն: Եւ այսպէս, մեծ թիւով ծնողներ ի՞րորշէն իրենց զաւակները դպրոց չորկն՝ պատճառաբանելով անոնց ուղեղային կամ ֆիզիքական տկարութիւնը: Պարզ բառերով անոնք կ'ըսեն . «Դպրոցը իր տեղը չէ» :

ԶԷ՛, այս մանուկը տկար չէ, պարզապէս անհրաժեշտ է, որ անոր դաստիարակութիւնը տրուի տարբեր մօտեցումով՝ իբրեւ յատուկ անհատ, առանց բաղդատութիւններ դնելու իր եւ միւս երեխաներուն միջեւ:

Երբ ամբողջացուցի համալսարանական առաջին տարեշրջանս՝ կատարելով մատուորապէս 4 մարզումներ (stages) զանազան հաստատութիւններու մէջ, տարբեր տեսակի ու տարիքի խումբերու հետ՝ ըմբռնելով իրենց դժուարութիւնները, շատ քաջալերուած էր անելի խոր գիտութիւններ ունենալու: Բայց եւ այնպէս մտքիս մէջ նաեւ այլ բան ծագեցաւ: Արդարեւ, դիտելով եւ հետապնդելով արաբական օտար հաստատութիւններուն ու վարժարաններուն մօտեցումը, թէ ինչպէ՛ս կարեւորութիւն կու տան դժուարութիւն ունեցող մանուկներու ուսման, պահ մը՝ իբրեւ լիբանանահայ երիտասարդ, մտածեցի, թէ ինչո՛ւ մենք ալ, մեր կարգին, բոլոր հայկական վարժարաններուն մէջ անկտիր չտանք այս կարեւոր ցուցմունքները: Ծիշղ է, որ արդեն կարգ մը հայկական վարժարաններ կը գործակցին համապատասխան մասնագետներու հետ, բայց աշխատանք պէտք է տարուի նաեւ ծնողներուն մօտ, որպէսզի անոնք դպրոցէ չզրկեն ու չնվնասացնեն իրենց յատուկ կարիքներ ունեցող զաւակները:

Շնորհն ու ուսուցչական կազմը լաւապէս պէտք է գիտակցի հոգեշարժական նպաստ (psychomotricité) կարեւորութեան, որովհետեւ անիկա կրնայ օգնել, ուղղել, հետեւիլ, ուսումնասիրել, վերադաստիա-



թիւններուն եւ պայմաններուն յարկի դաստիարակութեան մը ապահովումը մեր պարտականութիւնն է:

Սիրելի՛ ընթերցողներ, ի մասնաւորին՝ ծնողներ՝, երբե՛ք չյուսահատիք, եթէ ձեր զաւակը որոշ դժուարութիւններ կ'ունենայ տրվելու ընթացքին: Հարկ է, որ գիտանք, թէ երբ ան հետեւի յատուկ՝ իրեն համար մշակուած դաստիարակութեան, ուսումնասիրուած դասապահերու, անպայման անոր դժուարութիւնները պիտի նուազին, եւ ան իր տեղը պիտի գտնէ ընկերութեան մէջ:

Հոգեշարժունակութեան մասնագետը մօտէն կը հետեւի զանազան տարիքներու մանուկներու աճման: Ան վարժարաններուն մէջ կը վերադաստիարակէ զրեւու, կերպրանալու եւ զգուշացումի ընթացքին մարմնի պատկերն ու շարժիչի մեծ ու փոքր հմտութիւնները, որոնք կրնան յաճախ պատճառ դառնալ փոքրիկին ուսման կարողութիւններու անդամալուծում:

Դժուարութիւն ներկայացնող մանուկը պէտք չէ քննադատուի իր անկարողութիւններուն համար, այլ պարզապէս պէտք է գնահատուի իր կարողութեան եւ յառաջդիմութեան կամքին համեմատ՝ անպայման ծնողքին, մասնագետներուն եւ շրջապատին օգնութեամբ եւ անոնց մնայուն նեցուկով:

ԹՈՍԱՍԵԱՆ ՍԱԿԱԼԻ

ԸՆԿ. ՎԱՐԱՆԴ ՓԱՓԱԶԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

«ՄՈՌ-ՑՈՒՄԾ» ԱՆՄՈՌ-ԱՆԱԼԻ ԴԷՊՔ ՄԸ

Լիբանանի «քաղաքացիական պատերազմ» խորագիրը հազած՝ անելի քան 15 տարիներու դժոխային տարիները, բազմապիսի երեսներուն շարքին, պատմութեան անցուց «հակահայ արարքներ»-ու դիպաշար մը (որուն տարբերակներուն ականատես ենք նաեւ այս օրերուն): Պայթումէն կարճ ատեն ետք, Պէյրութը, նաեւ ամբողջ Լիբանանը իրողական բաժանումի ենթարկուեցան, եւ յառաջ եկան երկու մեծ գօտիներ՝ իրենց ենթագօտիներով հանդերձ: Պէյրութի մէջ ստեղծուեցան արեւելեան ու արեւմտեան կեսերը, որոնք տարբեր փուլերու զգեցան տարբեր զգեստներ՝ պահելով արտաքին միեւնոյն պատմունակը: Նպատակ չունինք վերաքաղը ընելու այդ մանրամասնութիւններուն:

Հակահայ արարքները հաւասարապէս բեմ ընտրեցին քաղաքի արեւելեան ու արեւմտեան գօտիները: Թեւեւ իւրաքանչիւր շրջանի մէջ անոնք արտայայտութիւն գտան տարբեր մղումներով, սակայն ունեցան ընդհանուր հասարակ յայտարար մը՝ փորձել հայ համայնքը ենթարկել այս կամ այն եղբայրասպան ուժին ազդեցութեան, կամ՝ հարուածել ու սպառել մեր Դատի միջնաբերդը ըլլալու այս օճակին հզօրանքը: Կարելի է հատոր հրատարակել հակահայ արարքներուն մասին («Ազդակ» տարիներ առաջ հրատարակեց նման հատոր մը), որոնք կ'առանձնանան լիբանանեան բեմի այլ դիպաշարներէն: Եթէ միայն յիշատակենք հայերու առեւանգումներն ու սպանութիւնը՝ երկու գօտիներուն մէջ, Պիքֆայայի յուշարձանին ռմբահարումը, հայկական կեդրոններու դէմ խափանարարական արարքներ, մեր թաղամասերուն ուղղակի ռմբակոծումը-թիրախաւորումը, մուսուրական-գրող ու ղեկավար դէմքերու եւ ազգի ու Դատի ծառայութեան մէջ վաստակ կերտած նուիրեալներու ահաբեկումը, կը կարծենք, թէ մօտաւոր ուրուագիծը տուած կ'ըլլանք այդ դէպքերուն: Աւելցընենք մանրամասնութիւն մը. այդ արարքները չսահմանափակուեցան որոշ տարիներով, այլ ընկերացան պատերազմական գրեթէ բոլոր տարիներուն, մերթ ընդ մերթ ստանալով համեմատաբար սաստիկ բնոյթ: Դժբախտ իրականութիւն էր նաեւ այն, որ սպանութիւններու եւ առեւանգումներու մէջ միջնակցութիւն ունեցան հայանուն վարձկաններ...: Մեր մամուլին ու կարգ մը հրատարակութիւններու մէջ կարելի է գտնել այդ դէպքերուն տարբերութիւնը:

Եթէ արեւելեան գօտիին մէջ արձանագրուած արարքները կրնան կազմել մեր ակնարկած հատորին մէկ բաժինը, կ'ուզեմք պահ մը կեդրոնաւ ալ «արեւմտեան» Պէյրութի մէջ արձանագրուած դիպաշարին վրայ, որ 1980-ականներու առաջին կիսուն եւ անկէ ալ քիչ մը անդին ունի իր «առանձին պատմութիւնները», եւ որուն իւրաքանչիւր էջը համաչափօրէն արժանի է յիշատակութեան: Յաճախ գրուած ու յիշատակուած են, օրինակի համար, Հայկական երեսփոխականակա պլոքի պետ ընկ. տղոք. Մեքլոն Եպիփրաթեանի դէմ մահափորձը, վաստակաւոր ու երիտասարդ ընկերներու եւ ազգայիններու, նաեւ «պատահական» հայորիկներու վրայ յարձակումներն ու առեւանգումները (տղոք. Յարութիւն Գազանճեան, ընկերներ Սարգիս Չէթեան, Լեւոն Պէրպերեան, Վարդգէս Տէր Կարապետեան, Ներսէս Խիւտավերտեան, Յակոբ Պարսունեան, Նշան Ճոզիկեան, Յարութ Մատենլեան եւ ուրիշներ), կեդրոններու դէմ թրջաբարոյ խափանարարութիւնները («Ազդակ»-ի թուրթի մթերանոցին իրդեհումը եւ նման դէպքեր): Այս դիպաշարին մէջ «մոռացութեան» գիրկը ինկած է անմոռանալի դէպք մը, որ կապուած է ընկ. Վարանդ Փափազեանին: Անոր անակնախ հրաժեշտը բնականաբար այս օրերուն առիթ կու տայ ընկերներու եւ ծանօթներու, որ անորադասնա իր վատաստեանն ու արժանիքներուն: «Ազդակ»-ի յարկին տակ, անկէ առաջ ու ետք, իրեն հետ ծանօթութիւնս եւ աշխատակցութիւնս ինծի ալ կրնայ ահագին նիւթ տրամադրել՝ գրելու իր մասին, սակայն կը նախընտրեմ առանձնացնել այդ դէպքը:

... Ծճգրիտ օրը չեմ յիշեր: 80-ականներու սկիզբներուն էր: Երեկոյ մը («Ազդակ»-ի տպարանը լուր հասաւ, որ քանի մը թաղ անդին ապրող՝ ընկ. Վարանդ Փափազեան մահափորձի ենթարկուած է, կրակած է փորձը կատարողներուն վրայ եւ փրկուած՝ մեծ վտանգէ մը: Պաշտօնակից ընկերքը մը հետ փութացինք անոր բնակարանը, նախ խնդակցելու ազատելուն, յետոյ նաեւ իմանալու մանրամասնութիւնները: Ծանօթ է, որ անոր բնակարանը կը գտնուէր Ն. Փալանճեան ճեմարանի կողքի թաղին մէջ՝ ԶՄԸՄ-ի մարզադաշտ-ակումբին կից շէնքին մէջ: Բարձրացանք երկրորդ յարկը եւ ինչեցուցինք դրան գանգը: Կրթանցքը կիսամութ էր: Դրան ետեւէն լսուեցաւ ընկ. Վարանդին ժպտալի ձայնը. «Սագո՛, ուրտեղե՛ր կ'ուզես...»: Յայտնապէս ներսէն՝ դրան վրայ հաստատուած մանր դիտակէն տեսած էր մեր ո՛վ ըլլալը: Դուռը բացաւ զարմացածներուս առջեւ եւ, ներսէն անելի լուսաւորուած դրան վրայ, ցոյց տուաւ փոքր ծակ մը: Զանի մը նախադասութեամբ պատմեց, որ պատշգամբին բաց պատուհանէն լսած է հայախօս անծանօթ տղոց կասկած արթնցնող գրոյցը, անոնք քիչ ետք հասած են իր յարկաբաժինին դրան առջեւ, սպառնական խօսքերով պահանջած են, որ դուռը բանայ, իսկ ինք, զգալով, թէ ի՛նչ կրնար ըլլալ այդ «անկոյճ իիւրերուն» դիտաւորութիւնը, դրան դիմացի սենեակին պատին ետին պատսպարուելով, կրակած էր դէպի դուռը: «Այցեղուններ» փախուտ տուած էին, յայտնապէս վիրաւոր մը տալով, որովհետեւ անոնց մեկնումին ետք, օգնութեան փութացող պահակ տղոց հետ աստիճաններուն վրայ ու շէնքի մուտքին արեան հեռքեր տեսած էր: Ուրեմն, քիչ առաջ, որ անի կը դիմէր՝ ըսելով. «Ուրտեղե՛ր կ'ուզես...», իսկ դրան վրայ երեսցող ծակը իր կրակոցէն ծնած էր:

Ան ալ բաժնեկից եղած էր, յետոյ ալ՝ մնաց, նման դէպքեր «բնական դիմակայութեամբ» ընկալելու տրահատորութեան ու ոգիին, որ համակած էր մեր ինքնապաշտպանութեան պատմելներուն վրայ կանգնող քաջասիրտ պահակ տղոցմէն մինչեւ քաղաքական ու ապահովութեան աշխատանքներուն լուծած աջառու եւ անտեսանելի ղեկավարները, որոնք պատմով առաջնորդեցին հայրութեան նաւը՝ բազմապիսի եւ բազմաբնոյթ փոթորիկներու ընդմէջէն, իրենց գործով իսկ կենդանի պատգամներ արձանագրելով իրենց ժամանակներու եւ յաջորդ սերունդներուն: Երբեմն «մանր դրուագներ» կրնան խտացնել շատ բան...

Ս. ՄԱՅՏԵՐԵՃԵԱՆ

16 սեպտեմբեր 2020

ՍՈՒՐԻՈՅ ՄԵՋ ԶԻՆՈՒՐԱԿԱՆ ՅԱՆՑԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԸ ԹՈՒՐԵԻԱՆ ԵՒ ԹՐԶԱՍԵՏ ՈՒԺԵՐԸ ՄԵՂԱՐԱՎԵ Է՝ ԶԻՆՈՒՐԱԿԱՆ ՅԱՆՑԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՀԱՍԱՐ

ՄԱԿ-ի Մարդու իրաւունքներու խորհուրդին կողմէ ձեւաւորուած «Սուրիոյ Արաբական Հանրապետութեան մէջ զինուորական յանցագործութիւններու ուսումնասիրութեան յանձնախումբ»-ը ներկայացուցած է իր գեկուցումը, որուն մէջ Թուրքիան, ինչպէս նաեւ անոր հովանաւորութեան տակ գտնուող Սուրիոյ ազգային բանակ խմբաւորումը եւ Սուրիոյ մէջ գտնուող այլ զինուորական խմբաւորումներ կը մեղադրէ Սուրիոյ քրտաբնակ տարածքներուն մէջ զինուորական յանցագործութիւններ կատարելու համար: Այս մասին կը հաղորդէ «Պի.Պի.Սի.»-ի թղթերէն ծանայութիւնը:

Զեկուցումին համաձայն, Սուրիա գտնուող գրեթէ բոլոր զինուորական խմբաւորումները կատարած են այնպիսի զինուորական յանցագործութիւններ, ինչպիսիք են սպանութիւնները, չարաշարանքի ենթարկելը, բռնաբարութիւնները, բռնի տեղաշարժերն ու կողոպուտները:

Յանձնախումբը, որուն կազմին մէջ ներառուած են Փառլոյ Սերժիօ Փիւնյոն, Զարէն Զոնիկէ Ապու-ճայտը եւ Հաննի Մեկալին, այս անգամ պատրաստած է 25 էջերէ բաղկացած գեկուցում մը, որ կը վերաբերի 5 մարտ 2020 թուականի զինադադարէն ետք Սուրիոյ մէջ տեղի ունեցած իրադարձութիւններուն:

Զեկուցումին մէջ տեղ գտած են ուսումնասիրութիւններ, որոնք կատարուած են այս տարուան 11 յունուարէն մինչեւ 1 յուլիս:

«Ոչ ոքի ձեռքերը մաքուր են, զինուորական խումբերը կը գործեն աւելի շատ սարսափելի խախտումները, որոնք ուղղուած են քաղաքային բնակչութեան դէմ», կը նշուի գեկուցումին մէջ:

Զեկուցումին մէջ ըսուած է նաեւ, որ 2011 թուականին Սուրիոյ մէջ սկսած պատերազմին արձանագրուած են նաեւ այնպիսի խախտումները, ինչպիսիք են հարկադիր գաղթը եւ ճնշումներ, ներառեալ այն շրջաններու մէջ, ուր պատերազմ տեղի չունենար, բայց եւ այնպէս կը կատարուին՝ խաղաղ բնակիչներէն շորթման միջոցով, նիւթական շահ ապահովելու արշաւներ:

«ՌՈՒՄԻԱՆ ՈՒ ԶԻՆԱՍՏԱՆԸ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԶԻՆՈՒՐԱԿԱՆ ԳԼԽԱՌՈՐ ՄՐՑԱԿԻՑՆԵՐՆ ԵՆ»

Կ'ԸՍԷ ՓԵՆԹԱԿՈՆ

Միացեալ Նահանգներու պաշտպանութեան Նախարար Մարք Եսփըր ամերիկեան «Ռանտ Զորփորեյշըն» հետազօտական կազմակերպութեան գրասենեակին մէջ արտասանած խօսքին մէջ յայտարարած է, թէ Միացեալ Նահանգներու զինուորական գլխաւոր մրցակիցները Ռուսիան ու Չինաստանն են. խօսքին ամբողջութիւնը հրապարակուած է Փենթագոնի պաշտօնական կայքին վրայ:

«Այսօր» գերտերութիւններու արդիականացման ժամանակաշրջանին, պաշտպանութեան Նախարարութիւնը Չինաստանը, ապա Ռուսիան կը ճանչնայ իբրեւ մեր զինուորական մրցակիցներ», կ'ըսուի գրութեան մէջ:

Եսփըրի խօսքով՝ երկու պետութիւններն ալ կ'արդիականացնեն իրենց զինուած ուժերը, ինչպէս նաեւ ընդլայնած են տիեզերական եւ համացանցային տարածքներուն մէջ իրենց հնարաւորութիւնները:

«Միացեալ Նահանգներն ու իրենց գործընկերները պետք է շարունակեն իրենց հիմնարար սկզբունքներուն եւ կենսակերպին պաշտպանութիւնը: Եւ ատիկա իրագործելու համար մենք բաւարար վճարականութիւն ունինք», աւելցուցած է Փենթագոնի ղեկավարը:



ԱՖԻԼ **AFHIL**
Since 1998
ARMENIAN MUTUAL FUND

20 Years of Commitment

**"The BEST WAY to
Find Yourself is to
LOSE YOURSELF
in the Service of
Others"**

Mahatma Gandhi

 Health Insurance
  Travel Insurance
  GoodCare Clinic
  Car Insurance
  Health Clubs

 Home Medical Equipment
  BOB - Western Union
  University and Student Fund
  «911» Health Magazine

www.afhil.com | AFHIL Mutual Fund
 Bourj Hammoud, Arin Center, 4th Floor | Tel. 01 242 5567

«ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ...»

Շարունակուած Ա. Էջէն

վերած: Ուրախութեամբ իմացայ, որ շուրջ 1500 տուներու վերաշինութեան օժանդակութիւն կատարած է, ինչ որ մեծապէս գնահատելի երեւոյթ է: Այս գործընթացը պետք է շարունակուի: Առաջին իսկ օրը ես որոշ թելադրութիւններ կատարած էի, եւ այդ թելադրութիւնները Մարմինը որդեգրած է: Օժանդակութեան առաջնահերթութիւնները ճշդուած են, ինչպէս նաեւ՝ հանգրուաններ: Առաջին հանգրուանը ժողովրդային տուններու վերանորոգումն է, երկրորդ հանգրուանը եկեղեցիները պետք է ըլլան, ապա դպրոցները եւ համայնքային կեդրոնները ու այսպէս պետք է շարունակուի: Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը միշտ աջակից ու մասնակից կը մնայ լիբանանահայութեան վերականգնումին:

2) Բարձր գնահատանք՝ Հայաստանին, Արցախին, Ս. Էջմիածինին եւ այն բոլոր ազգայիններուն ու կառոյցներուն, հեռաւոր թէ մօտաւոր, յայտնի կամ անյայտ, որոնք Նոյնիսկ մէկ տոյարով մասնակից դարձան լիբանանահայութեան վերականգնումի այս սրբազան աշխատանքին: Կ'աղօթեմ առ Աստուած, որ ինչ որ տուին այս գաղութի վերականգնումին՝ աւելիով ստանան:

3) Գաղութի մը կենսունակութեան աղբիւր դպրոցն է: Մարմինն ուշադրութեան յանձնեցի, որ տուններու վերաշինութեան ետք, պետք է հայ դպրոցը իր կարելու տեղը գրաւէ վերականգնումի աշխատանքին մէջ: Մեզի համար առաջնահերթութիւն է հայ դպրոցին զօրավիճ կանգնելը: Ուրախ եմ, որ Ազգային առաջնորդարանը եւ բոլոր հայ դպրոցներուն պատասխանատու մարմինները յառաջիկայ կրթական տարեշրջանին համար անվճար ուսման կարելիութիւնը յայտարարած են, այլ խօսքով՝ աշակերտները ոչ մէկ վճարում պիտի կատարեն: Սա երկու բան կը պարտադրէ մեզի.-

ա) Մեր ազգայինները ու բարերարները պարտաւոր են հայ դպրոցին զօրավիճ կանգնելու: Ինչ որ տուին շնորհակալ ենք, բայց պետք է աւելիով տան, անոնք, որոնք ցարդ չտուին, հարկ է որ տան, որպէսզի գաղութին հիմքը կազմող հայ դպրոցը միշտ մնայ առողջ:

բ) Աշակերտութեան հայ դպրոց անվճար ընդունումը կոչ մըն է ուղղուած մեր բոլոր ծնողներուն, կոչէն աւելի՝ պահանջ, որ իրենց զաւակները դրկեն հայ դպրոց: Ինչ-ինչ պատճառներով՝ նիւթականէն սկսեալ, մեր ծնողները հակամետ են իրենց զաւակները դրկելու օտար դպրոց: Սպասելի է, որ մեր բոլոր ընտանիքներուն զաւակները ուղղուին դէպի հայ դպրոց:

4) Մեր բոլորին նպատակը օժանդակել է, օգտակար ըլլալ է մեր ժողովուրդի սիրելի զաւակներուն: Մենք պիտի չուզենք երբեք, որ կարիքաւոր ընտանիք մը ըլլայ անկիւնը մնացած, տուն մը ըլլայ քանդուած եւ հեռու մեր աչքերէն ու մեր մտածումներէն: Այս Մարմինն նպատակն է օգտակար ըլլալ, կարելիութեան սահմաններուն մէջ բնականաբար, օժանդակել լիբանանահայ բոլոր ընտանիքներուն: Ինչպէս գիտեք, անցնող ամիսներուն ազգայիններ ու կառոյցներ ուստեստեղէնի ճամբով օգտակար եղան: Հետեւաբար, կը կրկնեմ, ես պիտի չուզեմ, որ որեւէ ընտանիք անտեսուած ու դժգոհ ըլլայ: Մարմինը իր կարելին կատարեց եւ պիտի շարունակէ կատարել, կարելիութեան սահմաններուն մէջ օժանդակելու մեր բոլոր ընտանիքներուն:

ԷՐՏՈՂԱՆ. «ՊԻՏԻ ՇԱՐՈՒՆԱԿԵՆԸ...»

Շարունակուած Ա. Էջէն

մեր բարեկամներուն համար, ինչպէս անոնք կը պայքարին մեզի համար: Այս է Թուրքիոյ պայքարի բնոյթը, եւ եթէ իրատեսական ու անկեղծ պատասխաններ տաւանք մեր բոլոր հարցումներուն, մեր պարտաւորութիւնը պիտի ըլլայ մեր քաղաքականութիւնները վերատեսութեան ենթարկել», նշեց Էրտողան:

Մինչ այդ, «Անատոլոյ» հաղորդեց, որ Պրիւքսելի մէջ ՕԹԱՆ-ի շտապ-բնակարանին մէջ երեկ մեկնարկած է Թուրքիոյ եւ Յունաստանի զինուորական պատուիրակութիւններու Միջերկրական ծովուն մէջ լարուածութեան մեղմացման վերաբերող չորրորդ հանդիպումը:

Բանակցութիւնները կը կրեն աշխատանքային բնոյթ, անոնց



5) Երբ կը խօսինք լիբանանահայութեան մասին, կ'ըսենք՝ լիբանանահայութիւնը սփիւռքահայութեան առանցքը եղած է: Սա լիբանանահայութեան պատմութեան չի պատկանիր, այլ նաեւ՝ ներկային: Լիբանանահայութիւնը, հակառակ այս դժուար պայմաններուն, տակաւին կը մնայ ողնասիւնը սփիւռքահայութեան՝ իր համահայկական դերակատարութեամբ: Լիբանանահայութիւնը Լիբանանի եօթը գլխաւոր համայնքներէն մէկն է: Այս երկրին մէջ մենք իրաւունքներ ունինք: Մեր պարտաւորութիւնները լիովին կատարած ենք եւ մեր իրաւունքներուն ամբօրէն կառչած: Հետեւաբար, լիբանանահայութեան վերակազմակերպումը եւ վերականգնումը համահայկական իմաստ ու նշանակութիւն ունի: Այս համապարփակ մօտեցումով մենք պետք է զօրավիճ կանգնինք լիբանանահայութեան: Հակառակ այս դժուար պայմաններուն, լիբանանահայութիւնը պիտի շարունակէ կառչած



մնալ այս երկրին, որովհետեւ լիբանանահայութեան հզօրացումը ո'չ միայն լիբանանահայութեան համար կենսական է, այլ նաեւ մեր հայրենիքին, Արցախին, մեր դատին համար:

Անգամ մը ես իմ գնահատանքը կը յայտնեմ Մարմինին, ինչպէս նաեւ Լիբանանի մեր բոլոր կառոյցներուն ու բոլոր ընտանիքներուն եւ մեր բոլոր զաւակներուն եւ կոչ կ'ուղղեմ, միասնաբար՝ կ'ուզեմ բառը ընդգծել, **միասնաբար՝** լիբանանահայութեան վերականգնումին մասնակից դառնալու: Թող Աստուած օրինէ լիբանանահայութիւնը, մեր բոլոր գաղութները, մեր ազգն ու հայրենիքը:

«ԱՐԱԲ-ԻՍՐԱՅԷԼԵԱՆ...»

Շարունակուած Ա. Էջէն

«Պաղեստինցի ժողովուրդը պետք է գիտակցի, թէ իր առջեւ առիթ մը գոյութիւն ունի: Պաղեստինեան իշխանութիւնը տակաւին կառչած կը մնայ շատ հին ու անարժէք զանգատներու: Անոնք պետք է 21-րդ դարուն միանան, մինչ անոնք ներկայիս տակաւին պատմութեան սխալ կողմն են», ըսաւ Ֆրիտմըն:

«Բռնագրաւեալ Այսրորդանանէն լայն տարածքներ կցելու խրախելեան ծրագիրներու սառեցումը միայն ժամանակաւոր որոշում է, եւ կը կարծեմ, թէ ատիկա տեղի պիտի ունենայ, եւ հակառակ սառեցման որոշումին, խրախելեան դրոշները կը շարունակեն ծածանիլ Այսրորդանանի մէջ բնակեցման վայրերուն վերեւ, եւ, ըստ խաղաղութեան մեր պատկերացումին, ատիկա պիտի շարունակուի», յայտնեց Իսրայէլի մէջ Միացեալ Նահանգներու դեսպանը: